

II

*(Ոչ օրենսդրական ակտեր)***ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ****ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ԹԻՎ 874/2012****ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)****«Էլեկտրական լամպերի եւ լուսատուների էներգապիտակավորման մասին»****Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող****(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքի կողմից էներգիայի եւ այլ ռեսուրսների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման եւ արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների ներկայացման միջոցով նշում կատարելու մասին»

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի պատվիրակված ակտեր՝ կապված էներգասպառող այնպիսի արտադրանքի պիտակավորման հետ, որն ունի էներգիայի խնայողության զգալի ներուժ եւ համարժեք ֆունկցիոնալությամբ արդյունավետության մակարդակներում էական տարբերություններ.

¹ ՊՏ L 153, 18.6.2010թ., էջ 1:

- 2) Կենցաղային լամպերի էներգապիտակավորման մասին դրույթները հաստատվել են Հանձնաժողովի 98/11/ԵՀ հրահանգով².
- 3) Էլեկտրական լամպերի կողմից օգտագործվող էլեկտրաէներգիան կազմում է Միությունում էլեկտրաէներգիայի ընդհանուր պահանջարկի զգալի մասը: Էներգաարդյունավետության արդեն իսկ ապահովված բարելավումներից բացի՝ կարելու է էլեկտրական լամպերի կողմից էներգասպառումը հետագայում նվազեցնելու հնարավորությունը.
- 4) 98/11/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչել եւ սույն կանոնակարգով նոր դրույթներ սահմանել՝ էլեկտրական լամպերի էներգաարդյունավետությունն էլ ավելի բարելավելու եւ էներգաարդյունավետ տեխնոլոգիաների միջոցով շուկայի վերափոխումն արագացնելու համար էներգապիտակավորման միջոցով մատակարարների համար դինամիկ խրախուսական միջոցների ստեղծումն ապահովելու նպատակով: 98/11/ԵՀ հրահանգի գործողության ոլորտը սահմանափակված է կենցաղային լամպերի կատեգորիային պատկանող կոնկրետ տեխնոլոգիաներով: Լամպի այլ տեխնոլոգիաների, այդ թվում՝ պրոֆեսիոնալ լուսավորության ոլորտում, էներգաարդյունավետությունը բարելավելու նպատակով պիտակ օգտագործելու համար սույն կանոնակարգը պետք է նաեւ տարածվի ուղղորդված լամպերի, գերցածր լարման լամպերի, լուսադիոդային լամպերի եւ հիմնականում պրոֆեսիոնալ լուսավորության համար օգտագործվող լամպերի, ինչպես օրինակ՝ բարձր ինտենսիվության պարպումային լամպերի վրա.
- 5) լուսատուները հաճախ վաճառվում են ներկառուցվող կամ ուղեկցող լամպերի հետ: Սույն կանոնակարգով պետք է ապահովվի սպառողների տեղեկացվածությունն էներգախնայող լամպերի հետ լուսատուի համատեղելիության, ինչպես նաեւ լուսատուի կազմում ներառված լամպերի էներգաարդյունավետության մասին: Միաժամանակ սույն կանոնակարգով չպետք է անհամաչափ վարչական պատասխանատվություն դրվի լուսատու

² ՊՏ L 71, 10.3.1998թ., էջ 1:

- արտադրողների եւ մանրածախ առետրով զբաղվող վաճառողների վրա, ինչպես նաեւ չպետք է խտրականություն դրվի լուսատուների միջեւ՝ կապված սպառողներին էներգաարդյունավետության վերաբերյալ տեղեկություն տրամադրելու պարտավորության հետ.
- 6) պիտակի վրա ներկայացվող տեղեկությունը պետք է ձեռք բերվի հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերի կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդների, այդ թվում՝ առկայության դեպքում ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտների վրա, ինչպես թվարկված են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 98/34/ԵՀ հրահանգի I հավելվածում³.
- 7) սույն կանոնակարգով պետք է սահմանվեն էլեկտրական լամպերի ու լուսատուների պիտակների միասնական ձեւն ու բովանդակությունը.
- 8) բացի այդ, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն էլեկտրական լամպերի եւ լուսատուների տեխնիկական փաստաթղթերին, ինչպես նաեւ էլեկտրական լամպերի տեղեկաթերթիկին ներկայացվող պահանջները.
- 9) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն էլեկտրական լամպերի եւ լուսատուների հեռահար վաճառքի ցանկացած ձեւի դեպքում, գովազդում եւ տեխնիկական գովազդային-քարոզչական նյութերում տրամադրվող տեղեկություններին ներկայացվող պահանջները.
- 10) անհրաժեշտ է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայում՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը.
- 11) 98/11/ԵՀ հրահանգից սույն կանոնակարգ անցումը դյուրացնելու նպատակով սույն կանոնակարգի համաձայն պիտակավորված կենցաղային լուսատուները պետք է համարվեն 98/11/ԵՀ կանոնակարգին համապատասխանող.

³ ՊՏ L 204, 21.7.1998թ., էջ 37:

12) հետեւաբար 98/11/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչել,
ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են այնպիսի էլեկտրական լամպերի պիտակավորմանը, ինչպես նաեւ արտադրանքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջներ, ինչպիսիք են՝

- ա) շիկացման լամպերը.
- բ) ֆլյուորոցենտային լամպերը.
- գ) բարձր ինտենսիվությամբ պարպումային լամպերը.
- դ) ԼԵԴ լամպերը եւ ԼԵԴ մոդուլները:

Սույն կանոնակարգով նաեւ սահմանվում են այնպիսի լուսատուների պիտակավորմանը ներկայացվող պահանջներ, որոնք նախատեսված են այդպիսի լամպերն աշխատեցնելու համար եւ վաճառվում են վերջնական սպառողին այդ թվում այն դեպքերում, երբ դրանք ընդգրկված են այլ արտադրատեսակների կազմում (օրինակ՝ կահույք), որոնք շահագործման փուլում իրենց առաջնային նպատակն իրականացնելու համար կախված չեն էլեկտրամատակարարումից:

2. Սույն կանոնակարգի գործողությունը չի տարածվում հետեւյալ արտադրատեսակների վրա՝

- ա) 30 լյումենից ցածր լուսային հոսքով լամպեր եւ ԼԵԴ մոդուլներ.
- բ) շուկայահանված այնպիսի լամպեր եւ ԼԵԴ մոդուլներ, որոնք նախատեսված են մարտկոցներով շահագործման համար.
- գ) այնպիսի սարքերի համար շուկայահանված լամպեր եւ ԼԵԴ մոդուլներ, որոնց առաջնային նպատակը լուսավորության հետեւյալ տեսակը չէ՝

- i) լուսարձակում որպես միջոց քիմիական կամ կենսաբանական գործընթացներում (ինչպիսիք են պոլիմերացումը, ֆոտոդինամիկ թերապիան, բուսաբուծությունը, տնային կենդանիների խնամքը, հակամիջատային միջոցները).
- ii) պատկերի ստացում եւ արտապատկերում (ինչպիսիք են լուսանկարչական խցիկի լուսարձակումը, լուսապատճենահանման սարքերը, տեսապրոյեկտորները).
- iii) ջերմություն հաղորդելը (ինչպիսիք են ինֆրակարմիր լամպերը).
- iv) ազդանշաններ տալը (ինչպիսիք են թռիչքագոտու լամպերը).

Այս լամպերը եւ ԼԵԴ մոդուլները դուրս չեն բերվում շրջանառությունից, եթե դրանք շուկայահանվում են լուսավորման համար.

դ) այն լամպերը եւ ԼԵԴ մոդուլները, որոնք շուկայահանվել են որպես լուսատուի մաս եւ նախատեսված չեն վերջնական սպառողի կողմից հեռացվելու համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք առաջարկվում են վերջնական սպառողին վաճառքի, վարձակալման կամ ապառիկ վաճառքի համար կամ ցուցադրվում են առանձին, ինչպես օրինակ՝ որպես պահեստամասեր.

ե) որպես այն արտադրատեսակի մաս շուկայահանված լամպեր եւ ԼԵԴ մոդուլներ, որի առաջնային նպատակը լուսավորությունը չէ: Այնուամենայնիվ, եթե դրանք առաջարկվում են վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար կամ ցուցադրվում են առանձին, ինչպես օրինակ՝ որպես պահեստամասեր, ապա ներառվում են սույն կանոնակարգի գործողության ոլորտում.

զ) լամպեր եւ ԼԵԴ մոդուլներ, որոնք չեն համապատասխանում Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը⁴

⁴ ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10:

կիրարկող կանոնակարգերի համաձայն 2013 եւ 2014 թվականներին կիրառելի համարվող պահանջներին.

- է) լուսատուներ, որոնք նախատեսված են բացառապես «ա»-«գ» կետերում թվարկված լամպերի եւ ԼԵԴ մոդուլների հետ օգտագործման համար:

Հոդված 2

Սահմանումները

Բացի 2010/30/ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումներից՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «լույսի աղբյուր» նշանակում է մակերես կամ օբյեկտ, որը նախատեսված է էներգիայի փոխակերպման միջոցով հիմնականում տեսանելի օպտիկական ճառագայթում արձակելու համար: «Տեսանելի» եզրույթը վերաբերում է 380-780 նմ ալիքի երկարությանը.
- 2) «լուսավորում» նշանակում է տեղանքի, օբյեկտների կամ դրանց շրջակայքի նկատմամբ լույսի կիրառումն այնպես, որ մարդիկ կարողանան դրանք տեսնել.
- 3) «ուղղորդված լուսավորություն» նշանակում է լուսավորության տեսակ, որի դեպքում լույսն ուղղված է այնպես, որ լուսավորվի օբյեկտը կամ տարածության մի մասը.
- 4) «լամպ» նշանակում է սարք, որի արդյունավետությունը կարող է գնահատվել առանձին, եւ որը բաղկացած է մեկ կամ ավելի լույսի աղբյուրներից: Այն կարող է ներառել սարքի գործարկման, էլեկտրամատակարարման կամ կայուն աշխատանքի համար կամ օպտիկական ճառագայթման բաշխման, ֆիլտրման կամ փոխակերպման համար անհրաժեշտ լրացուցիչ բաղադրիչներ այն դեպքում, երբ այդ բաղադրիչները չեն կարող հեռացվել՝ առանց սարքը անուղղելի ձեւով վնասելու.

- 5) «լամպի ցոկոլ» նշանակում է լամպի այն մասը, որը լամպի կոթառի կամ լամպի միակցիչի միջոցով ապահովում է էլեկտրասնուցմանը միացում, ինչպես նաև կարող է կիրառվել լամպը լամպի կոթառում պահելու համար.
- 6) «լամպի կոթառ» կամ «ագույց» նշանակում է սարքվածք, որը լամպը պահում է ճիշտ դիրքում՝ սովորաբար լամպի ցոկոլը դրա մեջ զետեղելով, որի դեպքում այն նաև ապահովում է լամպն էլեկտրասնուցմանը միացնելու միջոցներ.
- 7) «ուղղորդված լամպ» նշանակում է լամպ, որն առնվազն 80% լույս է արձակում π սո մարմնային անկյան տակ (որը համապատասխանում է 120° անկյամբ կոնին).
- 8) «ոչ ուղղորդված լամպ» նշանակում է լամպ, որն ուղղորդված լամպ չէ.
- 9) «շիկացման լամպ» նշանակում է լամպ, որում լույսն արձակվում է թելանման հաղորդչի միջոցով, որը էլեկտրական հոսանքի անցումով տաքացվում է մինչև շիկացումը: Լամպը կարող է պարունակել շիկացման գործընթացի վրա ազդող գազեր.
- 10) «շիկացման վակուումային լամպ» նշանակում է շիկացման լամպ, որում շիկացման թելը գործում է վակուումային էլեկտրական լամպի մեջ կամ շրջապատված է իներտ գազով.
- 11) «(վոլֆրամի) հալոգեն լամպ» նշանակում է շիկացման լամպ, որում շիկացման թելը պատրաստված է վոլֆրամից եւ պատված է հալոգեններ կամ հալոգենային միացություններ պարունակող գազով: Դրանք կարող են ապահովվել համակցված էլեկտրասնուցմամբ.
- 12) «պարպումային լամպ» նշանակում է լամպ, որում լույսն ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտադրվում է էլեկտրական պարպմամբ՝ գազի, մետաղի գոլորշու կամ մի քանի գազի ու գոլորշու խառնուրդի միջոցով.
- 13) «ֆլուորեսցենտային լամպ» նշանակում է սնդիկի պարունակությամբ ցածր ճնշման պարպումային լամպ, որում լույսի մեծ մասն արձակվում է

Ֆոսֆորային մեկ կամ ավելի պատվածքով, որոնք առաջանում են պարպման արդյունքում ուլտրամանուշակագույն ճառագայթման միջոցով: Ֆլյուորեսցենտային լամպերը կարող են ապահովվել համակցված բալաստով.

- 14) «Ֆլյուորեսցենտային լամպ՝ առանց համակցված բալաստի» նշանակում է միացկու կամ երկցկուլ ֆլյուորեսցենտային լամպ՝ առանց համակցված բալաստի.
- 15) «բարձր ինտենսիվության պարպումային լամպ» նշանակում է էլեկտրական պարպումային լամպ, որում լույս արտադրող աղեղը կայունանում է պատի ջերմաստիճանով, իսկ էլեկտրական լամպի պատի վրա աղեղն ունի մեկ քառակուսի սանտիմետրի հաշվով երեք վատտը գերազանցող լիցք.
- 16) «լուսադիոդային լամպ (ԼԵԴ)» նշանակում է լույսի աղբյուր, որը բաղկացած է ոչ օրգանական նյութի էլեկտրոն-խոռոչային անցաշերտը կազմող կիսահաղորդչային սարքվածքից: Էլեկտրական հոսանքի առաջացման ժամանակ անցաշերտն արձակում է օպտիկական ճառագայթում.
- 17) «ԼԵԴ փաթեթ» նշանակում է մեկ կամ ավելի ԼԵԴ (ԼԵԴ-եր) ունեցող հավաքվածք: Հավաքվածքը կարող է ներառել օպտիկական տարր եւ ջերմային, մեխանիկական ու էլեկտրական միջերեսներ.
- 18) «ԼԵԴ մոդուլ» նշանակում է ցկուլ չունեցող հավաքվածք, որը ներառում է տպատախտակի վրա մեկ կամ ավելի ԼԵԴ փաթեթներ: Հավաքվածքը կարող է ունենալ էլեկտրական, օպտիկական, մեխանիկական եւ ջերմային բաղադրիչներ, միջերեսներ եւ գործարկումը կարգավորող մեխանիզմ.
- 19) «ԼԵԴ լամպ» նշանակում է լամպ, որը ներառում է մեկ կամ ավելի ԼԵԴ մոդուլներ: Լամպը կարող է ունենալ ցկուլ.
- 20) «լամպի գործարկումը կարգավորող մեխանիզմ» նշանակում է էլեկտրասնուցման եւ մեկ կամ ավելի լամպերի միջեւ տեղակայված

սարքվածք, որն ապահովում է լամպի (լամպերի) շահագործման հետ կապված այնպիսի ֆունկցիոնալություն, ինչպիսիք են սնուցման լարման փոխակերպումը, լամպի (լամպերի) հոսանքի սահմանափակումը մինչև պահանջվող արժեքը, նախնական լարման եւ նախնական տաքացման հոսանքի ապահովումը, սառը վիճակից գործարկման կանխումը, էլեկտրական հզորության գործակցի ճշգրտումը կամ ռադիոխանգարումների նվազեցումը: Այս գործառույթներն իրականացնելու նպատակով սարքվածքը կարող է նախատեսված լինել այլ լամպի կառավարման մեխանիզմին միացնելու համար: Եզրույթը չի ներառում՝

— կարգավորման սարքվածքներ.

— ցանցային լարումն այլ սնուցման լարման փոխարկող սնուցման բլոկներ, որոնք նախատեսված են միեւնույն կայանքում թե՛ լուսավորման արտադրատեսակի, թե՛ այն արտադրատեսակի էլեկտրասնուցում ապահովելու համար, որի հիմնական նպատակը լուսավորելը չէ.

21) «կարգավորման սարքվածք» նշանակում է էլեկտրոնային կամ մեխանիկական այնպիսի սարք, որը կարգավորում կամ վերահսկում է լամպի լուսային հոսքը լամպի հզորության փոխակերպումից բացի այլ եղանակով, օրինակ՝ ժամաչափիչների (թայմերների) փոխարկիչի, ներկայության սենսորների, լույսի սենսորի եւ ցերեկային լույսի կարգավորման սարքվածքների միջոցով: Բացի այդ, լույսի՝ փուլային միացմամբ պայծառության կարգավորիչները նույնպես համարվում են կարգավորման սարքվածքներ.

22) «լամպի գործարկումը կարգավորող արտաքին մեխանիզմ» նշանակում է լամպի գործարկումը կարգավորող առանձին մեխանիզմ՝ նախատեսված լամպի կամ լուսատուի կորպուսից դուրս տեղադրելու համար կամ կորպուսից դուրս հանելու համար՝ առանց լամպը կամ լուսատուն անուղղելի ձեւով վնասելու.

- 23) «բալաստ» նշանակում է էլեկտրասնուցման բլոկի եւ մեկ կամ ավելի պարպումային լամպերի միջեւ տեղադրված լամպի գործարկումը կարգավորող մեխանիզմ, որը մակաձուխան, էլեկտրաունակության կամ մակաձուխան եւ էլեկտրաունակության համակցության միջոցով ծառայում է հիմնականում լամպի (լամպերի) հոսանքը մինչեւ պահանջված արժեքը սահմանափակելու համար.
- 24) «հալոգեն լամպի գործարկումը կարգավորող մեխանիզմ» նշանակում է լամպի գործարկումը կարգավորող մեխանիզմ, որով հալոգեն լամպերի համար ցանցային լարումը փոխակերպում է գերցածր լարման.
- 25) «կոմպակտ ֆլյուորեսցենտային լամպ» նշանակում է ֆլյուորեսցենտային լամպ, որը ներառում է լամպի գործարկման եւ կայուն աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր բաղադրիչները.
- 26) «լուսատու» նշանակում է սարք, որը բաշխում, ֆիլտրում կամ փոխակերպում է մեկ կամ ավելի լամպերից փոխանցված լույսը, եւ որը բաղկացած է բոլոր այն մասերից, որոնք անհրաժեշտ են լամպի համար հենարան ծառայելու, դրանք ֆիքսելու եւ պաշտպանելու համար, ու անհրաժեշտության դեպքում՝ սխեմաների օժանդակ միջոցներից՝ դրանք էլեկտրասնուցմանը միացնելու միջոցների հետ համատեղ.
- 27) «վաճառքի կետ» նշանակում է ֆիզիկական վայր, որտեղ ցուցադրվում է արտադրանքը կամ վերջնական սպառողին է առաջարկվում վաճառքի, վարձակալության կամ ապահիկ վաճառքի համար.
- 28) «վերջնական սպառող» նշանակում է ֆիզիկական անձ, որը գնում կամ ակնկալվում է, որ կգնի էլեկտրական լամպ կամ լուսատու, որը չի բխում իր առետրին, ձեռնարկատիրական գործունեությանը, արհեստին կամ մասնագիտությանը չառնչվող նպատակներից.
- 29) «վերջնական սեփականատեր» նշանակում է անձ կամ սուբյեկտ, որին պատկանում է արտադրանքը շահագործման ժամկետի ընթացքում, կամ ցանկացած անձ կամ սուբյեկտ, որը հանդես է գալիս այդ անձի կամ սուբյեկտի անունից:

Հոդված 3

Մատակարարների պարտականությունները

1. Որպես առանձին արտադրանք շուկայահանվող էլեկտրական լամպերի մատակարարներն ապահովում են, որ՝
 - ա) տրամադրվի II հավելվածով սահմանված արտադրանքի տեղեկաթերթիկը.
 - բ) հարցման հիման վրա անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին տրամադրվեն III հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
 - գ) կոնկրետ լամպի էներգասպառման կամ գնի մասին տեղեկություն տրամադրող ցանկացած գովազդում, պաշտոնական գնային առաջարկում կամ մրցակցային առաջարկում նշվի էներգաարդյունավետության դասը.
 - դ) կոնկրետ լամպի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային-քարոզչական նյութում, որով նկարագրվում են դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը, նշվի էներգաարդյունավետության դասը.
 - ե) եթե լամպը նախատեսված է վաճառքի կետում շուկայահանման համար, ապա անհատական փաթեթվածքի մակերեսին տեղադրվի կամ տպագրվի կամ կցվի I.1 հավելվածով սահմանված ձեւաչափով արտադրված եւ տեղեկություն պարունակող պիտակ, իսկ փաթեթվածքի վրա նշվի լամպի անվանական հզորությունը, որը չի նշվում պիտակի մակերեսին:
2. Վերջնական սպառողին վաճառելու համար նախատեսված լուսատուների մատակարարներն ապահովում են, որ՝
 - ա) հարցման հիման վրա անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին տրամադրվեն III հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.

- բ) 1.2 հավելվածի համաձայն՝ պիտակի վրա պարունակվող տեղեկությունը տրամադրվի հետևյալ դեպքերում՝
- i) կոնկրետ լուսատուի էներգասպառման կամ գնի մասին տեղեկություն տրամադրող ցանկացած գովազդում, պաշտոնական գնային առաջարկում կամ մրցակցային առաջարկում.
 - ii) կոնկրետ լամպի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային-քարոզչական նյութում, որտեղ նկարագրվում են դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը:

Այս դեպքում տեղեկությունը կարող է տրամադրվել 1.2 հավելվածով սահմանված ձեռնարկից բացի այլ ձեռնարկով, օրինակ՝ ամբողջությամբ տեքստային ձևով.

- գ) եթե լուսատուն նախատեսված է վաճառքի կետում շուկայահանման համար, ապա I հավելվածով սահմանված ձեռնարկով արտադրված եւ տեղեկություն պարունակող պիտակը վաճառողներին տրամադրվի անվճար՝ էլեկտրոնային կամ թղթային ձևով: Եթե մատակարարը նախընտրում է այն առաքման համակարգը, որի դեպքում պիտակները տրամադրվում են միայն վաճառողի կողմից հարցման հիման վրա, ապա մատակարարն անհապաղ տրամադրում է պիտակները՝ հարցման հիման վրա.
- դ) եթե վերջնական սպառողի համար լուսատուն շուկայահանվում է այնպիսի փաթեթվածքով, որը ներառում է էլեկտրական լամպեր, որոնք վերջնական սպառողը կարող է փոխարինել լուսատուի կազմում, ապա այդ լամպերի սկզբնական փաթեթվածքը ներառվում է լուսատուի փաթեթվածքում: Եթե ոչ, ապա լուսատուի փաթեթվածքի արտաքին եւ ներքին մակերեսների վրա պետք է որել է այլ ձևով ներկայացնել այն տեղեկությունը, որը զետեղված է լամպերի սկզբնական փաթեթվածքի

վրա եւ պահանջվում է սույն կանոնակարգով ու 2009/125/ԵՀ կանոնակարգի համաձայն լամպերի էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ սահմանող Հանձնաժողովի կանոնակարգերով:

Վաճառքի կետում շուկայահանման համար նախատեսված լուսատուների մատակարարները, որոնք սույն կանոնակարգի համաձայն տրամադրում են տեղեկություն, համարվում են, որ որպես առաքիչներ կատարել են իրենց պարտականությունները՝ լամպերի համար նախատեսված արտադրանքի տեղեկությունների պահանջների մասով, որոնք սահմանված են 2009/125/ԵՀ հրահանգի համաձայն լամպերի էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանող Հանձնաժողովի կանոնակարգերում:

Հոդված 4

Վաճառողների պարտականությունները

1. Էլեկտրական լամպերի վաճառողները ապահովում են, որ՝
 - ա) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկված յուրաքանչյուր մոդել, որի դեպքում վերջնական օգտագործողը չի կարող ակնկալել, որ կտեսնի ցուցադրված արտադրանքը, շուկայահանվի՝ զետեղելով VI հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրվող տեղեկությունները.
 - բ) կոնկրետ մոդելի էներգասպառման կամ գնի մասին տեղեկություն տրամադրող ցանկացած գովազդում, պաշտոնական գնային առաջարկում կամ մրցակցային առաջարկում նշվի էներգաարդյունավետության դասը.
 - գ) կոնկրետ մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային-քարոզչական նյութում, որտեղ նկարագրվում են դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը, նշվի այդ մոդելի էներգաարդյունավետության դասը:

2. Վերջնական սպառողին վաճառվող լուսատուների վաճառողներն ապահովում են, որ՝

ա) 1.2 հավելվածի համաձայն՝ պիտակի վրա պարունակվող տեղեկությունը տրամադրվի հետևյալ դեպքերում՝

i) կոնկրետ լուսատուների էներգասպառման կամ գնի վերաբերյալ տեղեկություն տրամադրող ցանկացած գովազդում, պաշտոնական գնային առաջարկում կամ մրցակցային առաջարկում.

ii) կոնկրետ լուսատուի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային-քարոզչական նյութում, որով նկարագրվում են դրա կոնկրետ տեխնիկական պարամետրերը:

Այս դեպքում տեղեկությունը կարող է տրամադրվել 1.2 հավելվածով սահմանված ձեռնարկից բացի այլ ձեռնարկով, օրինակ՝ ամբողջությամբ տեքստային ձևով.

բ) վաճառքի կետում ներկայացված ցանկացած մոդել ներառի 1.2 հավելվածով սահմանված պիտակ: Պիտակը ցուցադրվում է հետևյալ եղանակներից մեկով կամ երկուսով էլ՝

i) ցուցադրված լուսատուին շատ մոտ այնպես, որ առանց պիտակի վրա բրենդի անունը եւ մոդելի համարը կարդալու հստակ տեսանելի եւ ճանաչելի լինի, որ պիտակը պատկանում է մոդելին.

ii) հստակ կցված է վաճառքի կետում ցուցադրված լուսատուի վերաբերյալ ուղղակիորեն տեսանելի տեղեկությունը (օրինակ՝ գինը կամ տեխնիկական տեղեկությունները).

գ) եթե լուսատուն վերջնական սպառողին վաճառվում է այնպիսի փաթեթվածքով, որը ներառում է էլեկտրական լամպեր, որոնք վերջնական սպառողը կարող է փոխարինել լուսատուի կազմում, ապա

այդ լամպերի սկզբնական փաթեթվածքը ներառվում է լուսատուի փաթեթվածքում: Եթե ոչ, ապա լուսատուի փաթեթվածքի արտաքին եւ ներքին մակերեսների վրա պետք է որել է այլ ձեռով ներկայացնել այն տեղեկությունը, որը զետեղված է լամպերի սկզբնական փաթեթվածքի վրա եւ պահանջվում է սույն կանոնակարգով ու 2009/125/ԵՀ կանոնակարգի համաձայն լամպերի էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ սահմանող Հանձնաժողովի կանոնակարգերով:

Հոդված 5

Չափման մեթոդները

3-րդ եւ 4-րդ հոդվածներով տրամադրվելիք տեղեկությունը ձեռք է բերվում հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերով, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդների վրա, ինչպես սահմանված է VII հավելվածով:

Հոդված 6

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Էներգաարդյունավետության հայտարարված դասի եւ էներգասպառման համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են V հավելվածով սահմանված ընթացակարգը:

Հոդված 7

Վերանայումը

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան երեք տարի հետո Հանձնաժողովը վերանայում է այն՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը: Վերանայման արդյունքում գնահատվում են մասնավորապես V հավելվածով սահմանված ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները:

Հոդված 8

Ուժը կորցրած ճանաչելը

Թիվ 98/11/ԵՀ որոշումն ուժը կորցրած է ճանաչվում 2013 թվականի սեպտեմբերի 1-ից:

98/11/ԵՀ հրահանգին կատարվող հղումները համարվում են սույն կանոնակարգին կատարվող հղումներ: 98/11/ԵՀ հրահանգին կատարվող հղումները համարվում են սույն կանոնակարգի VI հավելվածին կատարվող հղումներ:

Հոդված 9

Անցումային դրույթներ

1. 3(2) եւ 4(2) հոդվածները չեն կիրառվում լուսատուների նկատմամբ մինչեւ 2014 թվականի մարտի 1-ը:
2. 3(1) (գ-դ) եւ 4(1) (ա-գ) հոդվածները չեն կիրառվում այն տպագրված գովազդների եւ տեխնիկական գովազդային-քարոզչական նյութերի նկատմամբ, որոնք հրապարակվել են մինչեւ 2014 թվականի մարտի 1-ը:
3. 98/11/ԵՀ հրահանգի 1(1) եւ (2) հոդվածում նշված այն լամպերը, որոնք շուկայահանվել են մինչեւ 2013 թվականի սեպտեմբերի 1-ը, պետք է համապատասխանեն 98/11/ԵՀ հրահանգով սահմանված դրույթներին:

4. 98/11/ԵՀ հրահանգի 1(1) եւ (2) հոդվածում նշված այն լամպերը, որոնք համապատասխանում են սույն կանոնակարգի դրույթներին, եւ որոնք շուկայահանվել են, վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվել են մինչեւ 2013 թվականի սեպտեմբերի 1-ը, պետք է համարվեն 98/11/ԵՀ հրահանգի պահանջներին համապատասխանող:

Հոդված 10

Ուժի մեջ մտնելը եւ կիրառությունը

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:
2. Այն կիրառվում է 2013 թվականի սեպտեմբերի 1-ից՝ բացառությամբ 9-րդ հոդվածում նշված դեպքերի:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2012 թվականի հուլիսի 12-ին:

Հանձնաժողովի կողմից՝


Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՉՈՒ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Պիտակ





1. ՎԱՃԱՌՔԻ ԿԵՏՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՄՊԵՐԻ ՊԻՏԱԿԸ
- 1) Փաթեթվածքի վրա տպագրված չլինելու դեպքում պիտակը պետք է լինի այնպիսին, ինչպիսին հետևյալ պատկերն է՝




- 2) Պիտակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունը՝
- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է սովորաբար տառաթվային, որով կոնկրետ լամպի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
 - III. VI հավելվածի համաձայն սահմանված էներգաարդյունավետության դասը, լամպի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.

IV. կշռված էներգասպառումը (E_c)՝ արտահայտված կՎտժ-ով յուրաքանչյուր 1 000 ժամի համար, որը հաշվարկվում եւ կլորացվում է մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը՝ VII հավելվածի համաձայն:

3) Եթե պիտակը տպագրված է փաթեթվածքի վրա եւ (2)(I), (II) եւ (IV) կետում նշված տեղեկությունները զետեղված են փաթեթվածքի որեւէ այլ հատվածում, ապա այդ տեղեկությունները կարող են ներառվել պիտակում: Այդ դեպքում պիտակը ընտրվում է հետեւյալ պատկերներից՝



4) Պիտակը պետք է ունենա հետևյալ ձևը.



որտեղ՝

ա) լամպի պիտակի համար վերոնշյալ գծապատկերում եւ «դ» կետում կիրառվող չափերի մասնագրերն են 36 մմ լայնություն եւ 75 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է այլ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը պետք է, այնուամենայնիվ, համապատասխանի վերը նշված մասնագրերին:

1-ին եւ 2-րդ կետերում նշված պիտակի տարբերակը պետք է ունենա առնվազն 36 մմ լայնություն եւ 75 մմ բարձրություն, իսկ 3-րդ կետում նշված տարբերակները պետք է համապատասխանաբար ունենան առնվազն 36 մմ լայնություն ու 68 մմ բարձրություն ու առնվազն 36 մմ լայնություն եւ 62 մմ բարձրություն: Եթե փաթեթվածքի որեւէ կողմ բավականաչափ լայն չէ պիտակը կամ դրա ազատ սահմանագիծը ներառելու համար, կամ եթե այն կարող է ընդգրկել ամենալայն կողմի

մակերեսային ավելի քան 50 %-ը, ապա պիտակը եւ սահմանագիծը կարող են փոքրացվել ոչ ավելի, քան անհրաժեշտ է այս երկու պահանջները բավարարելու համար: Սակայն պիտակը ոչ մի դեպքում չի կարող փոքրացվել իր ստանդարտ չափի 40 %-ից պակաս (ըստ բարձրության): Եթե փաթեթվածքը չափազանց փոքր է այդպիսի փոքրացված պիտակ զետեղելու համար, 36 մմ լայնությամբ եւ 75 մմ բարձրությամբ պիտակը պետք է փակցնել լամպի կամ փաթեթվածքի վրա.

- բ) պիտակի թե՛ գունավոր, թե՛ միագույն տարբերակների համար ֆոնը պետք է լինի սպիտակ.
- գ) պիտակի գունավոր տարբերակի համար գույները պետք է լինեն ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ, հետեյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.
- դ) պիտակը պետք է համապատասխանի հետեյալ պահանջներին (թվերը վերաբերում են վերոնշյալ գծապատկերին, գունային բնութագրերը կիրառվում են միայն պիտակի գունավոր տարբերակի համար).

1. **Պիտակի սահմանագծեր՝** 2 կետ, գույն՝ կապտականաչ 100 %՝ կլոր անկյուններ՝ 1 մմ:
2. **ԵՄ-ի պատկերանիշ՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
3. **Էներգիայի պատկերանիշ՝** գույն՝ X-00-00-00: Ներկայացված գրաֆիկական պատկերը՝ ԵՄ պատկերանիշ եւ էներգիայի պատկերանիշ (համակցված)՝ լայնություն՝ 30 մմ, բարձրություն՝ 9 մմ:
4. **Պատկերանիշի տակ գտնվող գիծ՝** 1 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, երկարություն՝ 30մմ:
5. **A++-E սանդղակ**

- **Սլաք՝** բարձրություն՝ 5 մմ, տարածություն՝ 0,8 մմ, գույներ՝
Ամենաբարձր դասը՝ X-00-X-00.
Երկրորդ դասը՝ 70-00-X-00.
Երրորդ դասը՝ 30-00-X-00.
Չորրորդ դասը՝ 00-00-X-00.
Հինգերորդ դասը՝ 00-30-X-00.
Վեցերորդ դասը՝ 00-70-X-00.
Վերջին դասը՝ 00-X-X-00:
- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 15 կետ, գլխատառերով եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 15 կետ, տողատակի, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա.

6. Էներգաարդյունավետության դասը՝

- **Սլաք՝** լայնություն՝ 11,2 մմ, բարձրություն՝ 7 մմ, 100 % սեւ:
- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 20 կետ, գլխատառերով եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 20 կետ, տողատակի, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա.

7. Կշռված էներգասպառում

Արժեքը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 16 կետ, 100 % սեւ. եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 9 կետ, 100 % սեւ:

8. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.

9. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը


Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 30 x 7 մմ տարածության մեջ:

Անհատական փաթեթվածքի վրա տեղադրված կամ տպագրված կամ դրան կցված որեւէ բան չպետք է ծածկի պիտակը կամ այն դարձնի ավելի քիչ տեսանելի:

Որպես շեղում՝ եթե Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի⁵ թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՀ) համաձայն մոդելին շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

2. ՎԱՃԱՌՔԻ ԿԵՏՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՊԻՏԱԿԸ

- 1) Պիտակը պետք է լինի համապատասխան լեզվով եւ պետք է լինի այնպիսին, ինչպիսին հետեւյալ պատկերն է կամ ինչպիսին 2-րդ եւ 3-րդ կետերում սահմանված տարբերակներն են.



⁵ ՊՏ L 27, 30.1.2010թ., էջ 1:

2) Պիտակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունը՝

- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով լուսատուի կոնկրետ մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
- III. 1-ին կետի օրինակում ներկայացված նախադասությունը կամ 3-րդ կետի օրինակներից որեւէ մեկը՝ որպես դրա այլընտրանք՝ ըստ անհրաժեշտության: «Լուսատու» բառի փոխարեն կարող է օգտագործվել լուսատուի կոնկրետ տեսակը կամ այն արտադրանքը նկարագրող հստակ եզրույթը, որի կազմում ընդգրկված է լուսատուն (օրինակ՝ կահույք), եթե պարզ է, որ եզրույթը վերաբերում է վաճառքում գտնվող այն արտադրանքին, որն օգտագործում է լույսի աղբյուրները.
- IV. սույն հավելվածի 1-ին մասի համաձայն՝ էներգաարդյունավետության դասերի ցանկը՝ անհրաժեշտության դեպքում կից ներկայացնելով հետևյալ տարրերը.
 - ա) «էլեկտրական լամպ» պատկերագիրը, որով նշվում է սպառողի կողմից փոխարինվող այն լամպերի դասերը, որոնց հետ լուսատուն համատեղելիության ժամանակակից պահանջների համաձայն համատեղելի է.
 - բ) այն լամպերի դասերի վրա դրված խաչը, որոնց հետ լուսատուն համատեղելիության ժամանակակից պահանջների համաձայն համատեղելի չէ.
 - գ) «A»-ից մինչև «A++» դասերի երկայնքով ուղղահայաց դասավորված «ԼԵԴ» տառերը, եթե լուսատուն պարունակում է ԼԵԴ մոդուլներ, որոնք նախատեսված չեն վերջնական


սպառողի կողմից հեռացվելու համար: Եթե այդպիսի լուսատուները չեն պարունակում ազոյցներ՝ սպառողի կողմից փոխարինվող լամպերը համար, ապա «B»-ից մինչև «E» դասերի վրա դրվում է խաչ.

V. անհրաժեշտության դեպքում հետեւյալ տարբերակներից մեկը՝


- ա) եթե լուսատուն աշխատում է այնպիսի լամպերով, որոնք փոխարինվում են վերջնական սպառողի կողմից, եւ այդպիսի լամպերը ներառված են լուսատուի փաթեթվածքում, ապա 1-ին կետի օրինակում ներկայացված նախադասությունը՝ ներառելով էներգիայի համապատասխան դասը: Անհրաժեշտության դեպքում նախադասությունը կարող է համապատասխանեցվել մեկ կամ ավելի լամպերին վերաբերելու համար, եւ կարող է նշվել էներգիայի մի քանի դաս.
- բ) եթե լուսատուն պարունակում է միայն LԵԴ մոդուլները, որոնք նախատեսված չեն վերջնական սպառողի կողմից հեռացվելու համար, ապա (3)(բ) կետի օրինակում ներկայացված նախադասությունը.
- գ) եթե լուսատուն պարունակում է թե՛ LԵԴ մոդուլներ, որոնք նախատեսված չեն վերջնական սպառողի կողմից հեռացվելու համար, թե՛ ազոյց՝ փոխարինվող լամպերի համար, եւ այդ լամպերը ներառված չեն լուսատուի կազմում, ապա (3)(դ) կետի օրինակում ներկայացված նախադասությունը.
- դ) եթե լուսատուն աշխատում է միայն այնպիսի լամպերով, որոնք փոխարինվում են վերջնական սպառողի կողմից, իսկ լուսատուի կազմում ներառված չեն այդպիսի լամպեր, ապա տարածքը թողնվում է դատարկ, ինչպես ներկայացված է (3)(ա) կետի օրինակում:

3) Բացի 1-ին կետում ներկայացված պատկերներից՝ հետևյալ պատկերներում ներկայացված են լուսատուի ստանդարտ պիտակների օրինակներ՝ առանց բոլոր հնարավոր համակցությունների ներկայացման՝

ա) էներգիայի բոլոր դասերին պատկանող լամպերի հետ համատեղելի՝ սպառողի կողմից փոխարինվող լամպերով աշխատող լուսատու՝ առանց որեւէ լամպի.




բ) լուսատու, որը պարունակում է միայն ԼԵԴ մոդուլներ, որոնք ենթակա չեն փոխարինման.




- գ) լուսատու, որը պարունակում է թե՛ ԼԵԴ մոդուլներ, որոնք ենթակա չեն փոխարինման, թե՛ սպառողի կողմից փոխարինվող լամպերի համար ազդյցներ՝ լամպերով.



- դ) լուսատու, որը պարունակում է թե՛ ԼԵԴ մոդուլներ, որոնք ենթակա չեն փոխարինման, թե՛ սպառողի կողմից փոխարինվող լամպերի համար ազույցներ՝ առանց լամպերի.



4) Պիտակի ձեւը պետք է համապատասխանի ստորեւ բերված գծապատկերներին՝



- ա) Պիտակը պետք է ունենա առնվազն 50 մմ լայնություն եւ 100 մմ բարձրություն.
- բ) Ֆոնը պետք է լինի սպիտակ կամ թափանցիկ, բայց էներգիայի դասերը ցույց տվող տառերը պետք է միշտ լինեն սպիտակ: Ֆոնը թափանցիկ լինելու դեպքում վաճառողը պետք է ապահովի, որ պիտակը փակցվի այն մակերեսին, որը սպիտակ կամ բաց մոխրագույն է, որով ապահովվում է պիտակի բոլոր տարրերի ընթեռնելիությունը.
- գ) գույները պետք է լինեն ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին եւ սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.
- դ) պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ գծապատկերին)
1. **Պիտակի սահմանագծերը՝** 2 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 1 մմ:
 2. **Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը՝** 1 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, երկարություն՝ 43 մմ:
 3. **Լուսատուի պատկերանիշ՝** ստվերագիծ՝ 1 կետ: գույն՝ կապտականաչ՝ 100 %, չափս՝ 13 մմ x 13մմ, կլոր անկյուններ՝ 1 մմ: Ներկայացված գրաֆիկական պատկերը կամ մատակարարի սեփական գրաֆիկական պատկերը կամ նկարը, եթե այն ավելի լավ է նկարագրում պիտակին համապատասխանող լուսատուն:
 4. **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 9 կետ կամ ավելի մեծ, 100 % սեւ:

5. A++-E սանդղակ

— Սլաք՝ բարձրություն՝ 5 մմ, տարածություն՝ 0,8 մմ, գույներ՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00.

Երկրորդ դասը՝ 70-00-X-00.

Երրորդ դասը՝ 30-00-X-00.

Չորրորդ դասը՝ 00-00-X-00.

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00.

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00.

Վերջին դասը՝ 00-X-X-00:

— **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 14 կետ, գլխատառերով եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 14 կետ, տողատակի, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա.

6. ԼԵԴ տեքստ՝ «Վերդենա» տառատեսակ, սովորական 15 կետ, 100 % սեւ:

7. Խաչ՝ գույն՝ 13-X-X-04, ստվերագիծ՝ 3 կետ:

8. Էլեկտրական լամպի պատկերանիշ՝ Ներկայացված գրաֆիկական պատկերը:

9. Տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 10 կետ, 100 % սեւ:

10. Կանոնակարգի համարը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 10 կետ, 100 % սեւ:

11. ԵՄ պատկերանիշ՝ Գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

12. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:**13. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը.**

Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 43 x 10 մմ տարածության մեջ:

14. Էներգիայի դասի սլաքը

- **Սլաք՝** բարձրություն՝ 3,9 մմ, լայնություն՝ ինչպես ներկայացված է 4-րդ կետի պատկերում, բայց նվազեցված այն նույն չափով, ինչ բարձրությունն է, գույնը՝ 5-րդ կետում նշված գույնը, եթե կիրառելի է:
- **Տեքստը՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 10,5 կետ, գլխատառերով եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 10,5 կետ, տողատակի, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա.

Եթե (2)(V)(ա) կետում նշված նախադասության համար նախատեսված հատվածում էներգիայի դասի սլաքն արտացոլելու համար բավականաչափ տարածք չկա, ապա այդ նպատակով կարող է օգտագործվել կանոնակարգի թվի եւ ԵՄ պատկերանիշի միջեւ ընկած հատվածը.

- ե) պիտակը կարող է նաեւ ցուցադրվել հորիզոնական դիրքով, որի դեպքում այն կունենա առնվազն 100 մմ լայնություն եւ 50 մմ բարձրություն: Պիտակի բաղադրիչները պետք է լինեն այնպիսին, ինչպիսին ներկայացված են «բ»-«դ» կետերում եւ անհրաժեշտության դեպքում պետք է դասավորված լինեն հետեւյալ օրինակներին համապատասխան: Եթե «A++» մինչեւ «E» սանդղակից ձախ գտնվող տեքստի համար նախատեսված պատուհանում էներգիայի դասի սլաքն արտացոլելու համար բավականաչափ տարածք չկա, ապա

տեքստի համար նախատեսված պատուհանը կարող է, ըստ անհրաժեշտության, ուղղահայաց դիրքով մեծացվել:

Այս լուսատու համատեղելի է էներգիայի հետևյալ դասին պատկանող էներգիայի լամպերի հետ

Լուսատուն վաճառվում է էներգիայի հետևյալ դասին պատկանող էներգիայի լամպերով՝

I II

874/2012

Այս լուսատուն պարունակում է ներկառուցված LED լամպեր:

Լուսատուի կազմում լամպերը չեն կարող փոխվել

I II

874/2012

Այս լուսատուն համատեղելի է էներգիայի հետևյալ դասին պատկանող էներգիայի լամպերի հետ

I II

874/2012

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Էլեկտրական լամպերի տեղեկաթերթիկը**

Տեղեկաթերթիկը պարունակում է պիտակում նշված տեղեկությունները: Եթե արտադրանքի բրոշյուրներ չեն տրամադրվում, ապա արտադրանքի հետ տրվող պիտակը նույնպես կարող է տեղեկաթերթիկ համարվել:

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Տեխնիկական փաստաթղթերը**

3(1)(բ) եւ (2)(ա) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են հետեւյալը՝

- ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
- բ) մոդելի ընդհանուր նկարագիրը, որը բավարար է դրա միանշանակ եւ դյուրին նույնականացման համար.
- գ) անհրաժեշտության դեպքում՝ կիրառված ներդաշնակեցված ստանդարտների հղումները.
- դ) անհրաժեշտության դեպքում՝ կիրառված մյուս տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը.
- ե) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու լիազորություններ ունեցող անձի նույնականացման տվյալները եւ ստորագրությունը.
- զ) էլեկտրական լամպերի դեպքում էներգասպառումը եւ էներգաարդյունավետությունը սահմանող տեխնիկական պարամետրերը, իսկ լուսատուների դեպքում՝ լամպերի հետ համատեղելիությունը՝ նշելով արտադրանքի պարամետրերի առնվազն մեկ իրական համակցություն եւ այն պայմանները, որում արտադրանքը պետք է փորձաստուգում անցնի.
- է) էլեկտրական լամպերի համար՝ VII հավելվածի համաձայն կատարված հաշվարկների արդյունքները:

Այս տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները կարելի է համակցել Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգի համաձայն սահմանված միջոցներին համապատասխան ներկայացված տեխնիկական փաստաթղթերի հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

**Տեղեկություններ, որոնք պետք է տրամադրվեն այն դեպքում,
երբ վերջնական սեփականատերերը չեն կարող ակնկալել, որ
կտեսնեն ցուցադրված արտադրանքը**

1. 4(1)(ա) հոդվածում նշված տեղեկությունները պետք է ներկայացվեն հետևյալ հաջորդականությամբ՝
 - ա) VI հավելվածում սահմանված էներգաարդյունավետությանը դասը.
 - բ) I հավելվածով պահանջվելու դեպքում յուրաքանչյուր 1 000 ժամի համար կՎտժ-ով արտահայտված կշռված էներգասպառումը, որը կլորացվում է մինչև ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկվում է VII հավելվածի 2-րդ մասին համապատասխան:
2. Եթե տրամադրվում է նաեւ արտադրանքի տեղեկաթերթիկում պարունակվող այլ տեղեկություն, ապա այն պետք է տրամադրվի IV հավելվածում նշված ձեւով եւ հաջորդականությամբ:
3. Սույն հավելվածում նշված ամբողջ տեղեկատվությունը տպագրվում կամ ցուցադրվում է ընթեռնելի տառատեսակով եւ տառաչափով:

ՀԱՎԵԼՎԱԾ V**Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող
ստուգման ընթացակարգը**

Շուկայի հսկողության նպատակով ստուգումներ կատարելիս շուկայի վերահսկողության մարմիններն այդ ստուգումների արդյունքների մասին տեղեկացնում են մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին:

Անդամ պետությունների լիազորված մարմինները կիրառում են հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի այնպիսի ընթացակարգեր, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա, այդ թվում՝ այն մեթոդների, որոնց հղում է կատարվել Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում այդ նպատակով հրապարակված փաստաթղթերում:

1. ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿ ՇՈՒԿԱՅԱՀԱՆՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՎԿԱՆ
ԼԱՄՊԵՐԻ ԵՎ ԼԵԴ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով անդամ պետությունների մարմինները փորձաստուգում են միեւնույն արտադրողի կողմից նույն մոդելի առնվազն 20 լամպի նմուշների խմբաքանակ, որոնք հնարավորության դեպքում հավասարաչափ ձեռք են բերվել պատահականորեն ընտրված չորս աղբյուրներից, եւ հաշվի են առնվել տեխնիկական փաստաթղթերում նշված տեխնիկական պարամետրերը III հոդվածի «գ» կետին համապատասխան:

Մոդելը համարվում է 3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխանող, եթե մոդելի էներգաարդյունավետության ինդեքսը համապատասխանում է դրա հայտարարված էներգաարդյունավետության դասին, եւ եթե խմբաքանակի միջին արդյունքները չեն տարբերվում

սահմանաչափից, շեմից կամ հայտարարված արժեքներից (այդ թվում՝ էներգաարդյունավետության ինդեքսը) ավելի քան 10 %-ով:

Հակառակ դեպքում, մոդելը չի համարվում 3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխանող:

Վերոնշյալ թույլատրելի շեղումները կիրառվում են միայն անդամ պետությունների համապատասխան մարմինների կողմից չափված պարամետրերի ստուգման նկատմամբ եւ պահանջներին համապատասխանություն ապահովելու համար տեխնիկական փաստաթղթերում մատակարարի կողմից չեն օգտագործվում որպես արժեքների թույլատրելի շեղում:

Հայտարարված արժեքները չպետք է մատակարարի համար լինեն ավելի բարենպաստ, քան տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքները:

2. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՄ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԻՆ ՎԱՃԱՌՎԱԾ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Լուսատուն համարվում է 3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխանող, եթե դրան կցված է արտադրանքի մասին պահանջվող տեղեկությունը, եւ եթե պարզվում է, որ այն համատեղելի է ցանկացած լամպի հետ, որի հետ, ըստ պնդումների, այն համատեղելի է I հավելվածի 2.2(IV)(ա) եւ (բ) կետի համաձայն՝ կիրառելով համատեղելիության գնահատման ժամանակակից մեթոդները եւ չափորոշիչները:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

Էներգաարդյունավետության դասերը

Լամպերի էներգաարդյունավետության դասը որոշվում է դրա էներգաարդյունավետության ինդեքսի (ԷԱԻ) հիման վրա, ինչպես սահմանված է 1-ին աղյուսակում:

Լամպի ԷԱԻ-ն որոշվում է VII հավելվածին համապատասխան:

Աղյուսակ 1

Լամպերի էներգաարդյունավետության դասերը

Էներգաարդյունավետության դաս	Ոչ ուղղորդված լամպերի էներգաարդյունավետության ինդեքս (ԷԱԻ)	Ուղղորդված լամպերի էներգաարդյունավետության ինդեքս (ԷԱԻ)
A++ (ամենաարդյունավետ)	$ԷԱԻ \leq 0,11$	$ԷԱԻ \leq 0,13$
A+	$0,11 < ԷԱԻ \leq 0,17$	$0,13 < ԷԱԻ \leq 0,18$
A	$0,17 < ԷԱԻ \leq 0,24$	$0,18 < ԷԱԻ \leq 0,40$
B	$0,24 < ԷԱԻ \leq 0,60$	$0,40 < ԷԱԻ \leq 0,95$
C	$0,60 < ԷԱԻ \leq 0,80$	$0,95 < ԷԱԻ \leq 1,20$
D	$0,80 < ԷԱԻ \leq 0,95$	$1,20 < ԷԱԻ \leq 1,75$
E (ամենաքիչ արդյունավետ)	$ԷԱԻ > 0,95$	$ԷԱԻ > 1,75$

ՀԱՎԵԼՎԱԾ VII

Էներգաարդյունավետության ինդեքսի եւ էներգասպառման հաշվարկի մեթոդը

1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿԸ

Մոդելի էներգաարդյունավետության ինդեքսի (ԷԱԻ) հաշվարկման համար գործարկումը կառավարող ցանկացած մեխանիզմի կորուստների մասով ճշգրտված դրա հզորությունը համեմատվում է դրա հզորության սկզբնական մակարդակի հետ: Հզորության սկզբնական մակարդակը ստացվում է օգտակար լուսային հոսքից, որը ոչ ուղղորդված լամպերի դեպքում ընդհանուր լուսային հոսքն է, իսկ ուղղորդված լամպերի դեպքում՝ 90° կամ 120° անկյամբ կոնում լուսային հոսքը:

ԷԱԻ-ին հաշվարկվում է հետեւյալ եղանակով եւ կլորացվում մինչեւ հարյուրերորդական նիշը.

$$ԷԱԻ = P_{cor}/P_{ref}$$

որտեղ՝

P_{cor} -ն առանց գործարկումը կարգավորող արտաքին մեխանիզմի մոդելների դրվածքային հզորությունն է (P_{rated}) եւ գործարկումը կարգավորող արտաքին մեխանիզմով մոդելների դրվածքային հզորությունն է (P_{rated})՝ ճշգրտված 2-րդ աղյուսակին համապատասխան: Լամպերի դրվածքային հզորությունը չափվում է դրանց մուտքային անվանական լարմամբ:

Աղյուսակ 2

**Հզորության ճշգրտումը, եթե մոդելի համար պահանջվում է
գործարկումը կարգավորող արտաքին մեխանիզմ**

Ճշգրտման շրջանակը	Գործարկումը կարգավորող մեխանիզմների կորուստների մասով ճշգրտված հզորությունը (P_{cor})
Հալոգեն լամպի գործարկումը կարգավորող արտաքին մեխանիզմով աշխատող լամպեր	$P_{rated} \times 1,06$
ԼԵԴ լամպի գործարկումը կարգավորող արտաքին մեխանիզմով աշխատող լամպեր	$P_{rated} \times 1,10$
Ֆլյուորեսցենտային լամպի գործարկումը կարգավորող արտաքին մեխանիզմով աշխատող 16 մմ տրամագծով ֆլյուորեսցենտային լամպեր (T5 լամպեր) եւ քառացցիկ միացուկով ֆլյուորեսցենտային լամպեր	$P_{rated} \times 1,10$
Ֆլյուորեսցենտային լամպի գործարկումը կարգավորող արտաքին մեխանիզմով աշխատող այլ լամպեր	$P_{rated} \times \frac{0,24\sqrt{\Phi_{use}} + 0,0103\Phi_{use}}{0,15\sqrt{\Phi_{use}} + 0,0097\Phi_{use}}$
Բարձր ինտենսիվության պարպումային լամպի գործարկումը կարգավորող արտաքին մեխանիզմով աշխատող լամպեր	$P_{rated} \times 1,10$
Ցածր ճնշման նատրիումային լամպի գործարկումը կարգավորող արտաքին մեխանիզմով աշխատող լամպեր	$P_{rated} \times 1,15$

P_{ref} -ը մոդելի օգտակար լուսային հոսքից (Φ_{use}) հետեւյալ բանաձեւով ստացված հզորության սկզբնական մակարդակն է՝

$$\Phi_{use} < 1\,300 \text{ լյումեն մոդելի համար՝ } P_{ref} = 0,88\sqrt{\Phi_{use}} + 0,0490\Phi_{use}$$

$$\Phi_{use} \geq 1\,300 \text{ լյումեն մոդելների համար՝ } P_{ref} = 0,07341\Phi_{use}$$

Օգտակար լուսային հոսքը (Φ_{use}) սահմանվում է 3-րդ աղյուսակին համապատասխան:

Աղյուսակ 3

Օգտակար լուսային հոսքի սահմանումը

Մոդել	Օգտակար լուսային հոսք (Φ_{use})
Ոչ ուղղորդված լամպեր	Ընդհանուր սահմանված լուսային հոսք (Φ)
շիկացման լամպերից տարբեր $\geq 90^\circ$ լուսարձակման անկյամբ ուղղորդված լամպերը, որոնց փաթեթվածքի վրա առկա է տեքստային կամ գրաֆիկական նախազգուշացում, որ դրանք հարմար չեն ուղղորդված լուսավորության համար	120° կոնում սահմանված լուսային հոսքը (Φ_{120°)
Այլ ուղղորդված լամպեր	90° կոնում սահմանված լուսային հոսքը (Φ_{90°)

2. ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

Կշռված էներգասպառումը (E_c) հաշվարկվում է կՎտժ/1 000 ժ-ով՝ հետևյալ ձևով, եւ կլորացվում է մինչեւ հարյուրերորդական նիշը՝

$$E_c = \frac{P_{cor} * 1000 \text{ ժ}}{1000}$$

որտեղ P_{cor} -ը գործարկումը կարգավորող ցանկացած մեխանիզմի կորստի մասով վերոնշյալ 1-ին մասին համապատասխան ճշգրտված հզորությունն է:
